ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ

«08» 04 2014թ. Թիվ 1/300Ա

Երևան

ՈՐՈՇՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱԶԴԱԳԻՐԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ-ն 2014 թվականի ապրիլի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ է ներկայացրել 10 000 հատ, 100 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, 10% տարեկան եկամտաբերությամբ, 36 ամիս շրջանառելիության ժամկետով արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիր:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի եզրակացությունը (2014 թվականի ապրիլի 2-ի թիվ 15 արձանագրություն)՝

Որոշում եմ.

1. Գրանցել «Ազգային հիփոթեքային ընկերություն» վերաֆինանսավորում իրականացնող վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված 10 000 հատ, 100 000 ՀՀ դրամ անվանական արժեքով, տարեկան 10 % անվանական տոկոսադրույքով, 36 ամիս շրջանառելիության ժամկետով արժեկտրոնային պարտատոմսերի ազդագիրը:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

/ ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

368